ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/89

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) քննելով «Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի կողմից 19.07.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>«Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Հասմիկ Օհանյան» ԱՁ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 19.07.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից չափիչի (մեգաօհմմետր) և թերմոզույգի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը հայտարարվել է գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2018 թվականի հունիսի 14-ի թիվ 1 որոշմամբ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բիգ Փարթս» ՍՊԸ-ն և «Հասմիկ Օհանյան» Ա/Ձ-ն:

«Բիգ Փարթս» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի թիվ 5 հավելվածով՝ գնային առաջարկում նշել է, որ ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18>> ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով. Ապրանքի անվանումը՝ Չափիչ (մեգաօհմմետր), Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)՝ 6,058,330 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 1,211,670 (սակայն պետք է լիներ 6,058,330*20%=1,211,666), Ընդհանուր գինը՝ 7,270,000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով գնանշման ընթացակարգ գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.06.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, ինչի արդյունքում վերջինիս հայտը գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Բիգ Փարթս» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և առաջարկել է վերջինիս երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Որպես հրավերով սահմանված որակավորումն հիմնավորող փաստաթղթեր՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր է ներկայացրել 29.06.2015թ. «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի և «Ֆինանսներ և իրավունք» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ 29/06 պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ ապրանքի գինը կազմում է 3,850,000 ՀՀ դրամ:

Պայմանագրի 4.3 կետի համաձայն՝ նույն պայմանագրի 4.1 կետում նշված գինն իր մեջ ներառում է նաև ավելացված արժեքի հարկը՝ ԱԱՀ-ն:

Պայմանագրի կնքման պահին գործող կարգավորման՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թղթային կամ էլեկտրոնային հարկային հաշվում պարտադիր նշվում են ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը առանձին տողով, ինչը տվյալ դեպքում «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել:

Հանձնաժողովի 13.07.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի որակավորումը հիմնավորող փաստաթղթերը գնահատվել են բավարար, ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս առաջարկվել է կնքել պայմանագիր:

Պատվիրատուն 13.07.2018թ. հրապարակել է պայմանագիր կնքելու մասին որոշումը և անգործության ժամկետ է սահմանել մինչև 21.07.2018թ.:

Բողոքի իրավական հիմքերը.

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (Ավելացված արժեքի հարկի դրույքաչափերը) Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20% տոկոս դրույքաչափով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Օրենքի 46-րդ հոդվածի.

1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

2. Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Կարգի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Բողոքի վերլուծությունը և պահանջը.

Այսպիսով, վերոնշյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի թիվ 5-րդ հավելվածով՝ գնային առաջարկով ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը կատարել է սխալ: Մասնավորապես 6,058,330 * 20% = 1,211,666 /ԱԱՀ/, իսկ ընկերությունը որպես ԱԱՀ նշել է 1,211,670, ինչի արդյունքում վերջնական գինը չի կարող համապատասխանել մասնակցի կողմից 5-րդ սյունյակում նշված ընդհանուր գնին, իսկ գնային առաջարկով նախատեսված օրինակելի ձևի համաձայն՝ 5=3+4, այսինքն՝ արժեք + ԱԱՀ պետք է հավասար լինի ընդհանուր գնին: Մասնակցի կողմից հաշվարկի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ երևում է, որ ԱԱՀ-ի հաշվարկը չի համապատասխանում ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին, մասնավորապես, «Բիգ Փարթս» ՍՊԸ-ն 4 ՀՀ դրամի չափով ավել կլորացում է իրականացրել: Սակայն Հանձնաժողովը գնային առաջարկը ուսումնասիրելիս պատշաճ, լրիվ և օբյեկտիվ չի ուսումնասիրել այն, հաշվի չի առել վերոնշյալ հանգամանքը և վերջինիս ճանաչել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Ցանկանում ենք նաև նշել, որ Գնումների բողոքարկման խորհուրդը 02.02.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/05 որոշման մեջ անդրադարձել է գումարների հաշվարկման կարգին և դրանց կլորացման վերաբերյալ արտահայտել է իր դիրքորոշումը:

Բացի այդ, նմանատիպ Պայմանագրի ուսումնասիրության արդյունքում ցանկանում ենք արձանագրել, որ ընկերության կողմից ներկայացված պայմանագիրը բնօրինակ տարբերակով հաստատված է միայն «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի կողմից, իսկ «Ֆինանսներ և Իրավունք» ՍՊԸ-ի մասով ներկայացված է պատճենահանված տարբերակը:

Պայմանագրին կից ներկայացված 29.06.2015թ. թիվ 4 հաշիվ-ապրանքագրում որպես ապրանքի գին նշվել է 3,850,000 ՀՀ դրամ, սակայն նույն պայմանագրի 4.3 կետով հստակ սահմանվել է, որ ապրանքի գինն իր մեջ ներառում է նաև ԱԱՀ-ն, սակայն այս դեպքում հաշիվ ապրանքագրում չի նախատեսվել և չի հաշվարկվել ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ն, որի արդյունքում խախտվել է ԱԱՀ-ի մասին ՀՀ նախկին օրենքով սահմանված պահանջները:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ Պատվիրատուի «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով Հանձնաժողովի կողմից խախտվել են ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով և 61-րդ կետով սահմանված պահանջները»:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ պարտավորեցնել «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից չափիչի (մեգաօհմմետր) և թերմոզույգի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել և/կամ չեղյալ համարել.

1. Հանձնաժողովի 22.06.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետով «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու, հայտը բավարար գնահատելու մասին և 6-րդ կետով «Բիգ Փարթս» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. Հանձնաժողովի 13.07.2018թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի որակավորումը հիմնավորող փաստաթղթերը բավարար գնահատելու, ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները,

3. Հանձնաժողովի 2018թ. հուլիսի 13-ի թիվ 3 որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի լիազորված ներկայացուցիչ Հրաչյա Գալոյանը:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի կողմից 19.07.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 23.07.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ս.թ հունիսի 14-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով հրապարակել է «Չափիչի (մեգաօհմմետր) և Թերմոզույգի» գնման ընթացակարգ, որի հայտերի բացման նիստը նշանակվել է 22.06.2018թ. մինչև 26.06.2018թ., ժամը 10:00-ին:

Հայտերի բացման նիստում պարզվել է, որ գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Հասմիկ Օհանյան» Ա/Ձ-ն և «Բիգ Փարթս» ՍՊԸ-ն:

Հայտերի գնահատման ընթացքում գնահատող հանձնաժողովի անդամները պարզել են, որ «Հասմիկ Օհանյան» Ա/Ձ-ի համակարգ մուտքագրած հայտում ներբեռնված չեն եղել հրավերով պահանջվող փաստաթղթերը: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները գնահատող հանձնաժողովը հայտը գնահատել է անբավարար և մերժել է:

Ընթացակարգի մյուս մասնակցի՝ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի հրավերով սահմանված փաստաթղթերը և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելը գնահատել է բավարար: Իրականում «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի գնային առաջարկում ԱԱՀ-ն 4 դրամով կլորացվել է: Մասնավորապես, գնային առաջարկում Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) սյունակում մասնակիցը ներկայացրել է 6,058,330 ՀՀ դրամ, որի 20%-ը հավասար է 1,211,666 դրամ, սակայն ներկայացվել է 1,211,670 դրամ և ընդհանուր գինը գրված է 7,270,000 դրամ:

Հաշվի առնելով, որ 4 դրամը վճարելի գումար չէ, այն ներկայացվել է որպես 1,211,666 դրամի կլորացում, ինչպես նաև 4 դրամի կլորացման արդյունքում հայտը մերժելիս գնման ընթացակարգը չկայացած կհամարվեր, սակայն գնման առարկան խիստ անհրաժեշտ էր «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2018թ. պլանային վերանորոգման աշխատանքների ընթացքում, ինչպես նաև առաջարկված ընդհանուր գինը հատկացված ֆինանսական միջոցից պակաս է 705,000 ՀՀ դրամով, հետևաբար գնահատող հանձնաժողովը «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար և նրան ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որպես որակավորումը հիմանվորող փաստաթուղթ ներկայացրել է «Ֆինանսներ և Իրավունք» ՍՊԸ-ի հետ 29.06.2015թ. կնքված թիվ 29/06 պայմանագիրը և պայմանագրի պատշաճ կատարումն հավաստող փաստաթղթերի պատճենները, որի համաձայն կողմերի միջև կնքվել և պատշաճ իրականացվել է 3,850,000 ՀՀ դրամի պայմանագիր, որը բավարարում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, գերազանցում է «Բիգ

Փարթս» ՍՊԸ-ի գնային առաջարկի՝ 7,270,000 ՀՀ դրամի հիսուն տոկոսը, ուստի գնահատող հանձնաժողովը այն գնահատել է բավարար:

Բողոքի այն մասը, որ որակավորման գնահատման նպատակով ներկայացրած պայմանագիրը «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի կողմից հաստատված է բնօրինակ տարբերակով, իսկ «Ֆինանսներ և Իրավունք» ՍՊԸ-ի կողմից պատճենված տարբերակով, մեր կողմից անհասկանալի է, քանի որ Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները»:

Ի լրումն 23.07.2018թ. ներկայացված դիրքորոշման, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 02.08.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Որպես բողոքի հիմք հանդիսացող օրենսդրական ակտ ԱՁ «Հասմիկ Օհանյան» ներկայացնում է, որ խախտվել է ՀՀ հարկային օրենսգրքի ԱԱՀ մասին օրենքի պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Սակայն պետք է փաստենք, որ հանձնաժողովը առաջնորդվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով, այլ ոչ ՀՀ հարկային օրենսգրքերով, ուստի հանձնաժողովը հայտը համարել է հրավերի պահանջներին համապատասխան և գնահատել բավարար:

Ուստի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն գտնում է, որ «Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի բողոքը ԱԱՀ-ի մասով անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման:

Բողոքի երկրորդ մասում նշված՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով հայտարարված «Չափիչ (մեգաօհմմետր) և թերմոզույգ»-ի գնման ընթացակարգի նիստում «Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի կողմից ներկայացվել է բողոք՝ անվավեր ճանաչել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով գնման ընթացակարգում «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի կողմից որակավորման փաստաթղթերում ներկայացված՝ նախկինում կատարված պայմանագիրը՝ նշելով, որ հաշիվ-ապրանքագրում բացակայում է ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ գումարը:

«Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի բողոքի երկրորդ մասը վերաբերում է «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի նախկինում պատշաճ կատարված պայմանագրի հաշիվ-ապրանքագրի լրացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1)հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) եթե գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքը կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա նույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պահանջները չեն սահմանվում հրավերով, և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին.

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջներից պարզվում է, որ գնահատող հանձնաժողովը բավարար է գնահատում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի նախկին երեք տարիների ընթացքում մատակարարված ապրանքների այն պայմանագրերը, որոնց ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

«Բիգ Փարթս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած 29.06.15թ թիվ 29/06 պայմանագրի համաձայն՝ մատակարարված ապրանքի գինը կազմում է 3,850,000 ՀՀ դրամ, որը պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկի (7,270,000 ՀՀ դրամ) հիսուն տոկոսից: «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջներով սահմանված չէ, որ գնահատող հանձնաժողովը պետք է գնահատի նաև մասնակցի հաշիվ-ապրանքագրի լրացման կարգը:

Հետևաբար, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն գտնում է, որ «Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի բողոքը «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի նախկին երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված պայմանագրի վերաբերյալ անհիմն է և ամբողջությամբ ենթակա է մերժման»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Էդգար Ասրյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/89 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի կողմից 19.07.2018թ. և կից փաստաթղթերը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի Բողոքներ քննող անձին ուղղված 23.07.2018թ. և 02.08.2018թ. գրություններով հայտնած դիրքորոշումը, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.06.2018թ. նիստի թիվ 2, 13.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար «Չափիչի (մեգաօհմմետր) և Թերմոզույգի» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտեր են ներկայացրել «Հասմիկ Օհանյան» ԱՁ-ն և «Բիգ Փարթս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

«Բիգ Փարթս» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրեր, Մասնակիցը Հանձնաժողովին է ներկայացրել «Ֆինանսներ և իրավունք» ՍՊԸ-ի հետ 29.06.2015թ. կնքված N 29/06 Մատակարարման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 4.1 կետով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքի գինը կազմում է 3,850,000 ՀՀ դրամ, իսկ 4.3 կետով՝ որ գինն իր մեջ ներառում է նաև ԱԱՀ-ն:

Հանձնաժողովի 22.06.2018թ. մինչև 26.06.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի ներկայացրած հայտում առկա չէ հրավերով պահանջվող փաստաթղթերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը որոշել է վերոնշված մասնակցի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, ինչի արդյունքում վերջինիս հայտը գնահատվել է բավարար, իսկ 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Բիգ Փարթս» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և առաջարկել է վերջինիս երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 13.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով որոշել է «Բիգ Փարթս» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից և առաջարկել կնքել պայմանագիր:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ «Հասմիկ Օհանյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչը հաստատեց Բողոքով ներկայացված փաստական և իրավական հանգամանքները, ինչպես նաև պնդեց Բողոքի պահանջը:

Պատվիրատուի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի հայտը Հանձնաժողովի կողմից գնահատել է բավարար, թեև, իրականում «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի գնային առաջարկում ԱԱՀ-ի գումարը չորս դրամով կլորացվել է (ավլացվել է): Նման որոշում կայացնելիս Հանձնաժողովի կողմից հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ չորս դրամի կլորացման հիմնավորմամբ հայտը մերժելու դեպքում գնման ընթացակարգը կհայտարարվեր չկայացած, իսկ ձեռքբերվող գնման առարկան խիստ անհրաժեշտ էր «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 2018թ. պլանային վերանորոգման աշխատանքների ընթացքում: Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց նաև, որ Մասնակցի կողմից առաջարկված ընդհանուր գինը Ընթացակարգի նախահաշվային գնից նվազ է 705,000 ՀՀ դրամով, ինչը ևս հաշվի է առնվել «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշումները կայացնելիս:

Ինչ վերաբերում է Մասնակցի կողմից որպես որակավորումը հիմանվորող փաստաթուղթ ներկայացրած «Ֆինանսներ և Իրավունք» ՍՊԸ-ի հետ 29.06.2015թ. կնքված թիվ 29/06 պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերին, Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ վերջինիս գնահատման ժամանակ Հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ կողմերի միջև կնքվել և պատշաճ իրականացվել է 3,850,000 ՀՀ դրամի պայմանագիր, որը գումարային արտահայտությամբ բավարարում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի

պահանջներին (գերազանցում է «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի գնային առաջարկի՝ 7,270,000 ՀՀ դրամի հիսուն տոկոսը), ուստի Հանձնաժողովը այն գնահատել է բավարար:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների:

Օրենսգրքի 318-րդ հոդվածի համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 14 մայիսի 1997թ., օրենքը մասնակի ուժը կորցրել է 04.10.16թ. ՀՕ-165-Ն օրենքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն) 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թղթային կամ էլեկտրոնային հարկային հաշվում պարտադիր նշվում են ԱԱՀ-ի դրույքաչափն ու գումարը՝ առանձին տողով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

-6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

-34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

- 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում

առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

- 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

- 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-129/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 2.5 կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող՝ մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում

մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

բ. նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

• 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Այսպիսով, ուսումնասիրելով վերը նշված իրավական և փաստական հանգամանքները, ինչպես նաև «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի հայտի պատճենը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի գնային առաջարկում «արժեք» (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) բաղադրիչի սյունակում Մասնակիցը նշել է 6,058,330 ՀՀ դրամ, որի 20%-ը հավասար է 1,211,666 դրամ, սակայն ԱԱՀ-ի սյունակում նշվել է 1,211,670 դրամ (4 դրամով ավել) և ընդհանուր գինը (արժեք + ԱԱՀ) կազմել է 7,270,000 դրամ:

- Որպես նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագիր՝ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ն Հանձնաժողովին է ներկայացրել «Ֆինանսներ և իրավունք» ՍՊԸ-ի հետ 29.06.2015թ. երկկողմանի ստորագրված և կնքված N 29/06 Մատակարարման պայմանագրի պատճենը:

- Մասնակցի կողմից նախկինում կատարված համանման (նմանատիպ) պայմանագրով սահմանվել է, որ պայմանագրով նախատեսված ապրանքի գինը 3,850,000 ՀՀ դրամ է, որն իր մեջ ներառում է նաև ԱԱՀ-ն, սակայն Պայմանագրին կից ներկայացված հաշիվ-ապրանքագրում առանձին տողով չի նախատեսվել ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարի չափը:

Այսպիսով, նկատի ունենալով, որ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի գնային առաջարկում որպես ավելացված արժեքի հարկի գումարի՝ 1,211,666 ՀՀ դրամի կլորացում նշված 1,211,670 ՀՀ դրամը գերազանցում է նույն գնային առաջարկով ներկայացված «արժեք» բաղադրիչի 20%-ը՝ 4 դրամով, և միաժամանակ հաշվի առնելով, որ նշված 4 դրամ գումարը չի հանդիսանում Պատվիրատուի կողմից վճարման ենթակա գումար և չի հանգեցրել Մասնակցի առաջարկած գնի՝ Ընթացակարգի նախահաշվային գինը գերազանցելուն, ինչպես նաև այն, որ Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց ԱԱՀ սյունյակում նշված հարկի գումարի հաշվարկման, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Մասնակցի կողմից կատարված գումարի կլորացումը չի կարող հիմք հանդիսանալ Մասնակցի գնային առաջարկը Հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատելու և վերջինիս հայտը մերժելու համար:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ն, որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնելով «Ֆինանսներ և իրավունք» ՍՊԸ-ի հետ 29.06.2015թ. երկկողմանի ստորագրված և կնքված N 29/06 Մատակարարման պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ըստ էության, դրանով իսկ հավաստել է նշված պայմանագիրը ողջ ծավալով կատարված լինելու փաստը, որպիսի պայմանը սահմանված է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով: Այսինքն, Հանձնաժողովի կողմից ենթակա է գնահատման նշված փաստաթղթի առկայության կամ բացակայության փաստը, այլ ոչ թե նշված հաշիվ-ապրանքագրի կազմման առանձնահատկությունները:

Վերը նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հասմիկ Օհանյան» ԱՁ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 19.07.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ